

## ՔՈՅԹ ՀԵՂԻՆԵ

### I

Ամրակուռ. Ժայռի կըրծքին անսասսան  
Յենուած՝ կանգնած էր մի հին մենաստան  
Եւ բարձըր գահից տարիներ երկար  
Իր հպարտ հայեացքն ուղղած դէպի վայր՝  
Նայում էր մի լայն, գըրկաբաց հովտի,  
Ուր միշտ պղտորուած, միշտ յուղուած գետի  
Ափերի վըրայ մի հըսկայ քաղաք  
Փըռել էր ազատ շէնքեր ընդարձակ։  
Եւ կեանքը՝ նոյնքան պղտոր ու յուղուած,  
Ինչպէս ալիքներ գետի կատաղած,  
Ահեղ յործանկը էր տալիս անդադրում  
Խառնիճաղանճով լի փողօցներում.  
Ու մարդիկ այնտեղ ցերեկ ու գիշեր,  
Զինուած իրար դէմ, ինչպէս գաղաններ,  
Խըլում էին հացն իրար բերանից  
Եւ պատառ-պատառ լինում իրարից։  
Ուժեղը՝ արինս-փըրփուր բերանին՝  
Զոքում էր թոյլի, անզօրի կըրծքին  
Ու հըսկարատութեամբ շուրջը նայելով՝  
Տօնում էր թոյլի անկումը ծաղրով։  
Խսկ թոյլը, խեղճ... նա գետնատարած  
Հողի, մոխրի մէջ՝ կեանք էր աղերսում,  
Կամ հալածական՝ որջերը մտած՝  
Մահուան ցաւի մէջ աշխարհն անիծում։  
Եւ մենաստանը... նա լուռ, հեգնաբար

Դիտում էր միայն իր բարձրութիւնից  
Կեանքի և մահուան այս ահեղ պայքար,  
Դիտում էր հըպարտ ու անկարելից:

## II

Ես եղայ այնտեղ մի անգամ. թըմրած,  
Անգործութիւնից ձանձրացած կոյսեր,  
Սև հանդերձների ծալքերում թաղած  
Ե՛ւ սիրտ, և' մարմին, որպէս ըստուերներ,  
Թափառում էին անձայն քայլուածքով  
Մենաստանի մէջ անյօյդ, անվրդով:  
Ոչ ճիշն ու գոռոց տանջուող քաղաքի,  
Ոչ կոչն օգնութեան ալեծուփ կեանքի  
Զըգտան երբէք այնտեղ արձագանդ  
Մենաւոր վանքի կամարների տակ:  
Զանգահարութեան մեզմ զօղանջիւնով  
Օրօրուած՝ խաղաղ նիրհում էր անվերջ  
Այնտեղ ամեն ինչ անյօյ մըրափով  
Մենաստանի լուռ անդորրութեան մէջ:

## III

Բայց կոյսերի մէջ կար մէկն... երբ վանկքում,  
Ցերեկուայ խաղաղ ժամերից յետոյ,  
Գալիս էր նոյնքան խաղաղ երեկոյ,  
Երբ առանձնացած իրանց խուցերում  
Քոյրերն ազօթքի վերջին մըրմունջով  
Պատրաստում էին քուն մտնել շուտով,—  
Նա դուրս էր գալիս վանքի դատարկուած  
Գաւիթն ու անձայն, միայնակ նըստած  
Մի քարի վրայ՝ նայում էր երկար  
Իր բարձր դիրքից հեռու՝ դէպի վայր,  
Ուր աղմկում էր քաղաքն անդադար.  
Գիշերամուտի կիսախաւարում

Մէկը միւսից յետոյ փայլվըլում  
 Ու վառւում էին անթիւ լապտերներ.  
 Ահա և հովտի հեռաւոր լանջեր՝  
 Մի վայրկեան կորած, չքացած աշբից՝  
 Երեան եկան խաւարի միջից.  
 Ահա և մօտիկ լերան դագաթին  
 Վառուեց ու հանդաւ և փայլեց կըրկին  
 Մի առանձնացած մենաւոր լապտեր՝  
 Սըփուելով չորս կօղմն աղօտ ճաճանչներ.  
 Երկինքը մըթնեց. բիւրաւոր աստղեր՝  
 Երբեկա պատասխան երկրային լոյսին՝  
 Վառեցին իրանց շողերն երկնային.  
 Քաղաքը հագաւ իր գիշերային  
 Գեղեցիկ հանդերձ ու մի գիւթական  
 Հին առասպելի թովիչ տեսարան  
 Բացեց մենաւոր կուսի առաջին  
 Անցկացան ժամեր. կէսգիշերային  
 Փըչեց հովս արդէն հեռու լեռներից  
 Ու շարժեց մի փունջ կուսի մազերից  
 Հանդարտուեց ժըխորն հըսկայ քաղաքի,  
 Ցաղթական քունը փակեց ամենքի  
 Աջքերն, ու խաւար գաւթի մէջ վանքի  
 Տիրեց գիշերուան խորին լուսթիւն.  
 Լոկ կոյսը միայն այնտեղ դեռ արթուն  
 Միայնակ նըստած՝ արցունքն աչքերին՝  
 Նայում է լերան փայլուն լապտերին.

## IV

Եւ յիշում է նա երազի նըման  
 Վաղուց անցկացած օրեր երջանիկ,  
 Երբ դեռ նորաբաց մի ծաղիկ դարնան,  
 Մի չքնաղագեղ, նորատի աղջիկ,  
 Նոր էր դուրս եկել կեանքի ճանապարհ՝  
 Վարդ-ծաղիկներում շրջելու յուսով,

Երբ ամենայն ինչ,—և' կեանք, և' աշխարհ  
 Ավեն էին դիւթիշ հըրապոյրներով.  
 Երբ մաքուր՝ ինչպէս լեռնային բիւրեղ,  
 Իբրև անապակ ազբիւրն անտառի,  
 Առաջին սէրը բացուել էր շըքեղ  
 Կուսական սըրտում ամենքից գաղտնի:  
 Այդ լերան գագաթն... այդ աղօտ լապտեր...  
 Քոյր Հեղինէի սըրտում, օ, որքան  
 Ե՛ւ քաղցր, և' քնքոյշ յիշողութիւններ  
 Զարթնում են հիմայ, երբ նա լուռ, անձայն,  
 Ժամերով նըստած, իբրև մի արձան,  
 Ուղղում է անթարթ հայեացքն այդ լոյսին  
 Կէսգիշերային խաւարի միջին:  
 Այս, դա կարծես դեռ երեկ լինէր...  
 Երբ նա մանկութեան անբաժան ընկեր  
 Մարինեանի հետ նըստած առանձին  
 Այդ լերան վրայ՝ հրճուանքով խորին  
 Նայում էր լոփի իր սիրահարին:  
 Լուռ էր և չորս կողմն. հովտի յատակից  
 Զէր հասնում նըրանց ոչ ձայն, ոչ շըտով,  
 Անոյշ բուրմունք էր գալիս անտառից  
 Ու շընչում հովը մեղմով, կամացուկ...  
 Եւ միայն ձիւնոտ մի կատար հակայ,  
 Իբրև գաղտնապահ, անմոռունչ վկայ,  
 Նայում էր նըրանց ու ժպտում հեռուից,  
 Թեթև թափանցիկ ամպերի միջից:  
 Եւ երկար-երկար Հեղինէն՝ դըրած  
 Գըլուխն իր սիրած ընկերի ուսին՝  
 Ըզգում էր իրան երկրից վերացած,  
 Մի կախարդական աշխարհի միջին:  
 Եւ բաբախում էր նրա սիրտն ուժգին,  
 Հոսում էր ուրախ արցունքն աչքերից,  
 Անհօւն բերկարանքով հըրճում էր հոգին՝  
 Փայփայուած ձքնաղ երազ-յոյսերից:

## V

Օ՛, չընաշխարհիկ ծընունդ երկնային,  
 Օ՛, ցքնանգ երազ, օ, սէր առաջին,  
 Ով չէ փայփայել քեզ սըրտի խորքում,  
 Զէ ապրել երբէք նա այս աշխարհում.  
 Դու ես կեանքի օրն ու արև պայծառ,  
 Մըռայլ յարկի տակ—մի ջահ ոսկեվառ,  
 Խաւար դաշտի մէջ—նորածագ լուսին,  
 Շողջողուն մի աստղ—ամպերի միջին.  
 Երկնաք է բուրում քո մաքուր շընչից,  
 Ամբողջ դրախտ է ժըպիտըդ միայն.  
 Արդեօք չես իջել մի օր երկընքից,  
 Իբրև մի անգին պարդեւ մարդկութեան,  
 Արդեօք ով ես դու, ով սէր լուսածին,  
 Ամենակարող էակ անմարմին,  
 Արդեօք դու չես այն անծանօթ Աստուած,  
 Որ ըստեղծել է աշխարհարած:

## VI

Անցնում են, գնում ժամեր գիշերուայ,  
 Մէկ մէկից յետոյ գունատուած աստղեր  
 Հանդչում են արդէն երկընքի վըրայ.  
 Հանդչում է նաև մենաւոր լապտեր:  
 Օրուայ առաջին աղօտ շողերով  
 Բացում է հեռու արևելքն արդէն.  
 Անցնում է ծիծառ վաղորդեան երգով,  
 Գալիս է այգը. բայց քոյր Հեղինէն  
 Նըստած է դեռ ևս անձայն ու տըրտում  
 Մենաստանի լուռ, ամայի գաւթում:  
 Եւ յիշում է նա առաջին սիրոյ  
 Արագ սըլացած օրերից յետոյ  
 Բաժանման ժամը սիրած ընկերից,  
 Արրա նամակներն հեռու հիւսիսից,—

Այդ անշունչ, անխօս թըղթի կտորներ,  
 Որոնց հետ սակայն նա երկար ժամեր  
 Խօսում էր, ժըպտում ու կարօտագին  
 Համբուրում նըրանց կրկին ու կրկին.  
 Ուսանողական մաքուր երազներ,  
 Նորածիլ կեանքի անոյշ զառանցանք,  
 Յաւիտեան անխախտ սիրոյ երդումներ,  
 Զերմագին համբոյր, ողջոյն ու դգուանկը,—  
 Ահա ինչ էին նամակներն այնքան  
 Քաղցրախօս լեզուով շըշընջում նըրան  
 Հայրենի յարկի մի լուռ անկիւնում  
 Ու կոյսի սէրը վառում, բորբոքում:  
 Եւ քոյր Հեղինէն դողդոջուն ձեռքով  
 Շօշափում է կուրծքն, ուր վանականի  
 Սև ըսքեմի տակ այնքան խընամքով  
 Դեռ մինչև այսօր ամենքից դաղտնի  
 Պահւում են նըրանկը իբրև սըրբութիւն,  
 Իբրև յիշատակ անդարձ կորածի:

## VII

Մեղմ նախերդանկով զանդակը վանքե  
 Հնչեց առաջին զօղանջն իր երդի.  
 Մօտակայ լերան կողմից մի այլ զանդ  
 Կրկնեց նոյն երդը, իբրև արձագանդ.  
 Մերունի ժամհարն աղօթք անելով  
 Պըտըտուեց գաւթում դանդաղ քայլերով  
 Մի քանի անգամ, բայց քոյր Հեղինէն  
 իր սենեակի մէջ փակուել էր արդէն:  
 Անքուն գիշերից յետոյ նա յօդնած  
 Ու տանջուած մարմնով մտաւ անկողին.  
 Փակուեցին կոյսի աչքեր ծանրացած,  
 Սենեակում տիրեց լոււթիւն խորին:  
 Սակայն անցեալի սօսկալի պատկեր,  
 Յիշողութիւններ անջինջ, անմոռաց,

Հըրեղէն ձեռքով ընդմիշտ դրոշմուած  
 Կոյսի հոգու մէջ՝ ցերեկ ու գիշեր  
 Զէին հեռանում նըրա առաջից,  
 Նըրա թէ արթուն, թէ փակ աչքերից:  
 Եւ տեսնում է նա հեռու հիւսիսի  
 Մայրաբաղաքում մի փոքրիկ սենեակ,—  
 Մերկ, մըուայլ պատեր, աղքատ կարասի,  
 Եւ մութ անկիւնում մի անտէր դիակ,—  
 Մի մաշուած հիւծուած անդութ թոքախտից  
 Երիտասարդի ուրուական-մարմին,  
 Մի դառն ժպիտ, մի վերջին կըսկիծ  
 Եւ անհուն սիրով մի հայեացք վերջին...  
 Տեսնում է դագաղ՝ ծաղկով զարդարուն՝  
 Եկեղեցսւ մէջ ջահեր, կերոններ,  
 Ուսանողների խուռացն բազմութիւն,  
 Դէմքեր վըշտալից, արտասուող աչքեր...  
 Փոխում է պատկերն, ահեղ սոսկումով  
 Տեսնում է կոյսը մի բաց գերեզման,  
 Մի խոր փոս՝ լըցուած կիսով չափ ջըրով,  
 Ուր Մարինեանի հետ նա յաւիտեան  
 Թաղում է իր սիրտն, իր կեանքը մատաղ,  
 իր ոսկի յոյսեր, երազներ չքնաղ... .

## VIII

Հնչում է նորից վանական զանդակ.  
 Կարճատև քնից կոյսը վերկացած՝  
 Հագնում է իր սև հանդերձն ու արագ  
 Իջնում դէպի վանք Քոյրերն հաւաքուած  
 Երգում են այնտեղ արդէն տըխրաձայն  
 Ու մելամաղձիկ միշտ նոյն մեղեդին,  
 Միշտ նոյն հոգեմաշ աղօթք, շարական,  
 Միշտ նոյն անտարբեր սուրբի առաջին.  
 Թափուր և տըխուր է վանքն այդ ժամին.  
 Միայն մի պառաւ՝ սիւնի մօտ կանգնած՝

Չոքում է, կանգնում ու չոքում կըսկին՝  
 Անհասկանալի, բերան սովորած  
 Խըրթին աղօթքի մըրմունջ շրթունքին։  
 Լոկ մէկը միայն աղօթք է անում  
 Կարեվէր խոցուած սըրտի խորքերից,—  
 Նա իր սեփական մըրմունջ է կարդում,  
 Նա խօսում է իր սեփական ցաւից։  
 Հեղինէն է դա. քաշուած մի անկիւն,  
 Ուր մի այլ կոյսի կախուած է պատկեր,  
 Պատմում է նըրան իր ցաւերն անհուն,  
 Ամբողջ աշխարհից թագցըրած վէրբեր։  
 Եւ կաթիլ-կաթիլ արտասուբն առաստ  
 Հոսում է, գընում նըրա աչքերից,  
 Եւ երկու կոյսեր՝ երկար, անընդհատ  
 Նայում են իրար դէմքով վշտալից։  
 Ու որքան անդամ Հեղինէն անձայն  
 Կանգնած այդ կոյսի պատկերի առաջ՝  
 Իր անկուշտ հայեացքն ուղղել է նըրան  
 Եւ հանել սըրտից հօգեմաշ հառաչ.  
 Նա եղել է մայր, այդ հրէուհին,  
 Ուղիղ է, մի մայր ցաւալի, խըզճուկ,  
 Բայց և այնպէս մայր. մի օր նա գըրկին  
 Բըռնել է սիրուն ու կայտառ մանուկ,  
 Նայել է նըրա գեղեցիկ դէմքին  
 Մայրական անհուն սիրոյ ժըրիտով,  
 Սեղմել է կըրծքին նըրան ջերմագին,  
 Հըրճուել է նըրա անուշիկ լեզուով։  
 Իսկ քոյր Հեղինէն... օ, ի՞նչպէս, ի՞նչպէս  
 Կ'ուզէր նա հիմա այդ մայր-կոյսի պէս  
 Սեղմել իր սըրտին մի փոքրիկ մանուկ  
 Որպէս յիշատակ սիրոյ վաղանցուկ...

## IX

Քանի մի տարի անցել էր արդէն

Այն օրից յետոյ, երբ քոյր Հեղինէն  
 Վըճռեց տուն, ծընող, ամեն ինչ թողնել  
 Եւ մատաղ կեանքը վանքի մէջ թաղել  
 Սև ըսքեմի տակ, վանական մեռած  
 Անդորրութեան մէջ անձնատուր եղած  
 Անվերջ աղօթքի՝ երազում էր նա  
 Ըսփոփանք գըտնել աշխարհի վըրայ...  
 Բայց ըսփոփանքը հեռու էր փախչում  
 Քոյր Հեղինէի արիւնոտ սըրտից,  
 Թէև ոչ մի կոյս գուցէ այդ վանքում,  
 Նըրա գոյութեան առաջին օրից,  
 Այդպէս սըրտաբուխ, ջերմ, թախանձագին  
 Աղերս չէր ուղղել անսիրտ երկրներին:  
 Եւ յաճախ, երբ լուռ դիշերուայ ժամին  
 Մենաստանի մէջ չէր լըստում մի ձայն,  
 Երբ իր սենեակում փակուած՝ լալագին  
 Աղօթք էր անում կոյսը բարձրածայն,  
 Երբ լիզում էր նա փոշին յատակի  
 Խելագարի պէս սըրտի կըսկծից,  
 Քոյր Հեղինէի վըշտերն աւելի  
 Վառում, բորբոքում էին աղօթքից...  
 Եւ այնուհետև նա ամբողջ օրեր,  
 Շաբաթ ու ամիս մահու շափ յոդնած՝  
 Այլ չէր աղօթում և, իբրև ըստուեր,  
 Իբրև ուրուական, կենդանի մեռած,  
 Շըրջում էր անխօս մենաստանի մէջ՝  
 Անյոյս կըրելով տանջանքներ անվերջ:

## X

Մի մթին գիշեր, երբ մենաստանում  
 Կոյսերը քընած էին անվըրդով,  
 Երբ քոյր Հեղինէն մենակ էր գաւթում  
 Պաշարուած խորին մըտածմունքներով,  
 Մենաստանի դուռն հանդարս բաղխեցին:

Ըսթափուած կոյսը մօտեցաւ դըրան.  
 —«Ո՞վ ես»—«Բաց արա, մի գաղթական կին,  
 Օթևան տուր ինձ այս գիշեր միայն.  
 Քնյը իմ, գըրկիս մէջ մանուկ կայ քընած։  
 Կոյսը բացեց դուռն ու առաջ ընկած  
 իսկոյն կընոջը տարաւ իր սենեակ.  
 Խաւարում շուտով վառուեցաւ ճըրադ  
 Ու լուսաւորեց մի թշուառ էակ։  
 Ցեղինէն տեսաւ մի վըտիտ մարմին,  
 Մի երիտասարդ կընոջ գեղեցիկ,  
 Բայց թառամած դէմք. մի սիրուն մանկիկ  
 Անոյշ մըշալով քընում էր նըրա  
 Արդէն ուժասպառ թևերի վըրայ։  
 Նայում էր կոյսը քընած տըղային,  
 Ու նըրա սիրտը խըփում էր ուժդին...  
 Այն, դա էր, դա, այդ սիրուն հրեշտակ,  
 Որին կարօտով այնքան ժամանակ  
 Կոյսը երազում սեղմում էր կրծքին  
 Ու ջերմ համբոյրներ դրօշմում դէմքին.  
 Դրանք են, այն, այդ գանդուր մազեր,  
 Այդ փոքրիկ ճակատն, այդ վարդ-շրմունքներ,  
 Որոնց խօլական իր ցնորքներում  
 Հեղինէն այնքան նայել էր սիրով,  
 Անշինչ դըրոշմել իր սըրտի խորքում,  
 Փայփայել նրանց այրուող կարօտով։  
 Անհասկանելի դեռ նոյնիսկ իրան  
 Հըրճուանկով վերցրեց Հեղինէն մանկան,  
 Մեղմեց քնքութեամբ կուսական սըրտին  
 Ու հանդարաս դըրեց նըրան անկողին.  
 —«Մի խեղճ ողբուկ է,—ասաց գաղթականն,  
 Հազիւ թէ լինի երկու տարեկան.  
 Դեռ գիւղում թիւրքերն հօրն ըսպանեցին,  
 Իսկ մայրը մեռաւ կէս-ճանապարհին.  
 Մնաց խեղճն անտէր ամայի դաշտում.

Ես առոյշքերի, բայց այս քաղաքում  
Ես էլ եմ անտէր, մենակ ու օտար  
Եւ հազիւ եմ հաց ճարում ինձ համար»:  
Ու երկար, երկար դիշերուան ժամին  
Լըսում էր կոյսը կընոջ պատմութիւնն, —  
Մի սոսկալի անցք, վէպ դըժոխային,  
Առասպելական մի գաղանութիւն.  
Եւ ինչպէս մութ ամպ պարզուող երկընքում՝  
Հալում էր կոյսի հանդարտուած սըրտում  
Անձնական վիշտը. —և ըզդում էր նա  
Իր ամբողջ հոգով, որ աշխարհում կայ  
Եւ ուրիշների սըրտերում կըսկիծ,  
Կան ցաւ ու տանջանք, կայ վէրք արնալից,  
Կան տառապաքներ այրուող աւելի,  
Աւելի ահեղ ու սարսափելի:

## XI

Անցաւ մի տարի: Գեղեցիկ գարուն  
Պըճնել էր ժայռի կուրծքը զարդարուն.  
Ուր կար մի բուռ հող, մի ճեղքուածք փոքրիկ,  
Այնտեղ բուսել էր մի սիրուն ծաղիկ:  
Անամպ երկընքում փայլում էր արև,  
Ժըպտում էր աշխարհ, բացւում էր տերև.  
Ուրախ էր նոյնիսկ մըռայլ մենաստան.  
Նա էլ էր ըզդում ոյժը ընութեան.  
Նըրա կըտրի տակ երգում էր ծիծառ  
Իր առաւօտի երգը խանդավառ,  
Եւ մի այլ թըռչնակ, —մի մանուկ կայտառ  
Խաղում էր գաւթում ուրախ ծիծաղով  
Եւ իր մանկական անոյշ ժպիտով  
Լցնում կոյսի սիրտն անհուն բերկանքով:  
Եւ քոյր Հեղինէն նայում է մանկան,  
Այդ փոքրիկ օրբին սիրով անսահման,  
Գըրկում է, սեղմում նըրան իր սըրտին,

Իբրև սիրավառ մի մայր՝ ջերմագին  
 Համբուրում նըրա ծիծաղկոտ աչքեր,  
 Նրա վառ այտեր, ժըպտուն շրթունքներ:  
 Եւ չարաճընի մանկական խաղով  
 Փարում է կոյսին մանուկն հըրճուանքով;  
 Եւ ուրախ, անհոգ՝ դոգում մայրական  
 Երգում է անոյշ տաղեր մանկութեան:  
 Երջանիկ է կոյսն. աչքեր ու, չընալ,  
 Խնչակս տարիներ առաջ, կենառուրախ  
 Վառում են, փայլում ու նայում կըրկին  
 Նախկին բերկրանքով Աստծոյ աշխարհին:  
 Վշշտեր հոգեմաշ, տանջանքներ դաժան  
 Վաղուց է ել չեն այցելում նըրան.  
 Որբի հետ նըրա խաղաղած սըրտում  
 Նորածիլ կեանք է յարութիւն առնում:  
 Եւ ըզգում է կոյսն իր սըրտում կրկին  
 Բորբոքուած սիրոյ ջերմութիւն նախկին՝  
 Այս անդամ դէպի մի անտէր որբուկ,  
 Դէպի մի զուարթ, գեղեցիկ մանուկ,  
 Դէպի մի փոքրիկ, անդին արարած՝  
 Արեան գաշտերից բըռնի դուրս կորզուած։  
 Եւ երեկոյեան, երբ զանդը վանքի  
 Հընչում է վերջին զօղանչն իր երդի,  
 Վերցնում է կոյսը ըշտապով մանկան,  
 Տանում է սենեակ, և իր կուսական  
 Անկօղնում պառկած՝ դըրկած որբուկին,  
 Սեղմում է ամսուրամուր իր կրծքին,  
 Ու քընում հանգիստ, խաղաղ, անվրդով՝  
 Գալիք օրերի անոյշ երազով,  
 Մոռացած և՛ ցաւ, և՛ տանջանք նախկին,  
 Մի նոր յոյս սըրտում, մի նոր կեանք դըրկին...

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ